ՀՈՒՇԱՐՁԱՆԱՅԻՆ ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Մ. Ս. ՍԱՐԳՍՅԱՆ

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունից կարճ ժամանակ հետո՝ 1918 թ. ապրիլի 12-ին, Սովետական Ռուսաստանի Ժողկոմխորհը Լենինի նախագահությամբ որոշում է կայացնում ռուսական սոցիալիստական հեղափոխության պատվին հուշարձանների նախագծեր մշակելու մասին։ *Այդ որոշումով քանդակագործների առաջ խնդիր էր դրվում անցյալի հեղափոխական գործիչների, գիտության, գրականության և արվեստի առավել նշանավոր անձանց հիշատակին հուշարձաններ, հուշատախտակներ և կոթողներ ստեղծել։*

Որոշումից մի քանի ամիս հետո Ռուսաստանի Ժողկոմխորհը հաստատում է ապագա հուշարձանների ցուցակը և հանձնարարում ամենակարճ ժամանակամիջոցում Մոսկվայում և Պետրոգրադում կառուցել ավելի քան 50 նոր հուշարձան։

Նշանավոր հեղափոխական գործիչների, գիտնականների, գրողների, նկարիչների և արտիստների հիշատակին քանդակագործական նոր հուշարձաններ կառուցելու մասին կայացված վերոհիշյալ որոշումը դարձավ առաջնահերթ աշխատանքի պլան կերպարվեստի բնագավառում։

Այդ պլանը կյանքում արագորեն իրագործելու համար 1918—1919 թթ. աշխատանքի են կոչվում Ռուսաստանում այն ժամանակ եղած համարյա բոլոր ռուս և այլազգի, այդ թվում նաև հայ քանդակագործներն ու ճարտարապետները։

Չափազանց կարճ ժամանակամիջոցում՝ 1918—1920 թթ. Մոսկվայում և Պետրոգրադում, հետագայում նաև ռուսական մյուս խոշոր քաղաքներում հիմնադրվում է մի քանի տասնյակ քանդակագործական հուշարձան, այդ թվում Ռադիշչևի, Մարքսի, Էնգելսի, Պլեխանովի, Դոստոևսկու, Լասալի, Դոբրոլյուբովի, Հ. Հայնեի, Չերնիշևսկու, Շևչենկոյի, Գերցենի, Պեստելի և ուրիշների հուշարձանները։

Պահպանվել է այդ տարիներին նկարահանված վավերագրական մի ֆիլմ, որտեղ երևում է հայ քանդակագործ Հակոբ Գյուրջյանը Լենինի հետ Մոսկվայում Կարլ Մարքսի հուշարձանը հիմնադրելու ժամանակ։ Այդ հուշարձանի նախագիծը հանձնարարված էր Հակոբ Գյուրջյանին, որը ռուս երիտասարդ քանդակագործներ Ս. Ալյոշինի և Ս. Կոլցովի հետ ստեղծում է քանդակագործական մի կոմպոզիցիա։

Մոսկվայում եղած տարիներին Հ. Գյուրջյանը ստեղծում է նաև ռուս նկարիչ Վրուբելի հուշարձանի նախագիծը գիպսից և Բեթհովենի մարմարե կիսանդրին։ Նա լուսժողկոմ Ա. Լունաչարսկու միջնորդությամբ ցանկացել է բնականից քանդակել Լենինի դիմաքանդակը, սակայն չնայած Լենինը տվել է իր համաձայնությունը, ժամանակ չի ունեցել Գյուրջյանի այդ խնդրանքը կատարելու։ Միայն

Լենինի մահից անմիջապես հետո՝ 1924 թ. հունվար-փետրվար ամիսներին, հայ քանդակագործ, հետագայում մեծանուն ճարտարապետ Կարո Հալաբյանը Մոսկվայում թարմ տպավորության տակ ստեղծում է Լենինի կիսանդրին։

Նույն տարում Լենինի կիսադեմ բարձրաքանդակ է ստեղծում նաև Գրիգոր Կեպինյանը (Կեպինով), որը միաժամանակ ստեղծում է Մ. Յու. Լերմոնտովի, Ա. Ն. Օստրովսկու և Ս. Շահումյանի հուշարձանների նախագծերը։

1920 թ. նոյեմբերի 29-ին Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո կոմունիստական կուսակցությունը և կառավարությունը ձեռնարկում են միջոցառումներ երկրի տնտեսական և կուլտուրական կյանքի վերակառուցման, ազգային մշակույթի հետագա զարգացման համար։ Լուրջ ձեռնարկումներ են կատարվում նաև Սովետական Հայաստանում նոր հուշարձաններ կառուցելու ուղղությամբ։

Պետք է նկատել, որ հեղափոխությունից առաջ Հայաստանում քանդակագործական շատ հուշարձաններ չեն եղել։ Ցարական կառավարությունը ոչ միայն չէր խրախուսում, այլև ամեն կերպ արգելակում էր փոքր ազգերի, այդ թվում հայ ժողովրդի, մշակույթի ականավոր գործիչների պատվին հուշարձաններ կառուցելը։ Բացառության կարգով թույլատրվում էր արձաններ կանգնեցնել միայն եկեղեցիների բակերում կամ գերեզմանոցներում։

Շատ տխուր վախճան է ունենում Երևանի հրապարակում Խ. Աբովյանի հուշարձանը կառուցելու գործը։ Հայ ժողովուրդը, Հովհ. Թումանյանի հայտնի կոչով, ըսկըսում է հանգանակություն։ Քանդակագործ Ա. Տեր-Մարուքյանը 1910—1913 թթ. ստեղծում է Խ. Աբովյանի մի գեղեցիկ բրոնզե արձան, որը, սակայն, մնում է Փարիզի ձուլարաններից մեկում՝ բրոնզի արժեքի, ձուլման և տեղափոխման ծախսի միջոցներ չըլինելու պատճառով։

Սովետական Հայաստանում կերպարվեստը, մասնավորապես մոնումենտալ-հուշարձանային քանդակագործությունը, զարգացնելու համար Հայաստանի կոմունիստական կուսակցությունը և կառավարությունը հենց սկզբից, չնայած նորաստեղծ սովետական իշխանության առաջին տարիներին եղած տնտեսական դժվարություններին, հատկացնում են պետական զգալի գումարներ։ 1922 թ. հունիսին Հայաստանի լուսավորության ժողկոմատը հայտարարում է լավագույն հուշարձանների մրցանակաբաշխություն։ Ահա այդ հայտա-

բարությունը. «ՀՍԽՀ լուսժողկոմատը հայտարարում է մրցանակաբաշխություն ութ հուշարձանների, որ պիտի կառուցվեն Երևանում. 1. Քաղաքացիական կռիվներում ընկած կոմունիստներին. 2. Ստեփան Շահումյանին. 3. Միքայել Նալբանդյանին. 4. Վահան Տերյանին. 5. Գարրիել Սունդուկյանին. 6. Խաչատուր Աբովյանին. 7. Վլադիմիր Լենինին. 8. Կարլ Մարքսին»։

Ուշագրավ է այն, որ դեռևս Լենինի կենդանության ժամանակ պահանջ է զգացվել Հայաստանի մայրաքաղաքում կանգնեցնել Լենինի հուշարձանը, որն արտահայտելու էր հայ ժողովրդի անհուն սերը մեծ առաջնորդի նկատմամբ։ Թիֆլիսում 1920-ական թթ. սկզբներին քանդակագործ Մ. Միքայելյանի կերտած Լենինի կիսանդրին չի պահպանվել։

Գրավոր աղբյուրներից հայտնի է, որ այն ժամանակ Երևանում գործող քանդակագործ Վ. Մելիք-Հակոբյանը 1920-ական թթ. սկզբներին ստեղծում է Կ. Մարքսի, Ֆ. Էնգելսի և Լենինի գիպսե կիսանդրիներ, որոնք դրվում են բանվորական և արհմիութենական ակումբների կարմիր անկյուններում, իսկ տոնական օրերին և հանդիսավոր նիստերի ժամանակ՝ ամբիոնների վրա։ 1923 թ. Վ. Մելիք-Հակոբյանի նախագծով Էջմիածնում կանգնեցվում է «Էջմիածնում զոհված կոմունիստների հիշատակին» կոթող-հուշարձանը։ 1925 թ. Երևանի 26 կոմիսարների անվան զբոսայգու մուտքի մոտ դրվում է Մայիսյան ապըստամբության հերոս Ստեփան Ալավերդյանի կիսանդրի-հուշարձանը (գործ՝ Վ. Մելիք-Հակոբյանի)։

Նույն ժամանակաշրջանում նկարիչ և քանդակագործ Կ. Հալաբյանը քանդակում է Կ. Մարքսի, Ֆ. Էնգելսի, Ս. Շահումյանի, Ալ. Ջափարիձեի և ուրիշների կիսանդրիները, որոնք մի քանի այլ քանդակների հետ 1922 թ. ցուցադրվում են Երևանում՝ նրա ստեղծագործությունների անհատական ցուցահանդեսում և ստրժանանում հասարակության ու մամուլի ջերմ խրախուսանքին։ Այդ տարիներին նա քանդակում է հեղափոխության թշնամիների կողմից գնդակահարված Ալ. Ռուբենու (Ծատուրյան) կիսանդրին նրա հուշարձանի համար, որը, ինչպես գրում է «Խորհրդային Հայաստան» թերթը 1923 թ., «բավական հաջող է պատրաստված»։

1920-ական թթ. վերջերին և 1930-ական թթ. սովետահայ քանդակագործությունն ապրում է զարգացման նոր շրջան։ Երևան են տեղափոխվում մի շարք երիտասարդ պրոֆեսիոնալ քանդակագործներ՝ Ա. Սարգսյանը, Ա. Ուրարտուն, Ս. Ստեփանյանը, որոնք Երևանի կերպարվեստի ուսումնարանի և Մոսկվայի ու Լենինգրադի գեղարվեստական բարձրագույն ուսումնական հիմնարկներն ավարտած քանդակագործների հետ մասնակցում են քանդակագործության զարգացմանը։ Այդ ժամանակ Երևանում, Հայաստանի քաղաքներում, շրջկենտրոններում և առանձին գյուղերում կանգնեցվում են մի շարք քանդակագործական նոր հուշարձաններ։

Երևանում՝ Աբովյան փողոցի վրա, կուլտուրայի տան գլխավոր ճակատի երկու կողմերում, 1927—1929 թթ. դրվում են հեղափոխության նշանավոր գործիչներ Ս. Սպանդարյանի և Ալ. Ջափարիձեի կիսանդրի-հուշարձանները (գործ՝ Արա Սարգսյանի)։ Սպանդարյանի մարմարե կիսանդրին ներկայացնում էր պրոֆեսիոնալ հեղափոխականի կենդանի կերպարը։ Արտաքուստ հանգիստ դիմագծերում քանդակագործը վերարտադրել է նրա ներքին մեծ ուժը։ Քանդակագործական նյութի (մարմարի) նուրբ և պլաստիկական մշակումը

նպաստել է կերպարի զգացողական արտահայտչականության ուժեղացմանը։ Նույն քանդակագործի կերտած մի այլ հուշարձան՝ նվիրված 1920 թ. Մայիսյան հերոսական ապստամբությանը, 1931 թ. դրվում է Լենինականում։

Նշանավոր է Ս. Մ. Կիրովի հուշարձանը Կիրովականում։ Երեք մետրանոց բազալտե արձանը ներկայացնում է Կիրովին՝ կանգնած կրակոտ ճառ ասելիս։ Քանդակագործ Արա Սարգսյանը ձգտել է պորտրետային լուծմամբ տալ ժողովրդական տրիբունի ընդհանրացրած կերպար։ Ս. Մ. Կիրովի հուշարձանը աչքի է ընկնում հստակ գեղարվեստական ձևի մեջ կերպարի գաղափարական բովանդակության արտահայտչականությամբ։

Նշանակալից են Ղ. Ղուկասյանի և Ազիզբեկովի հուշարձանները Երևանում (գործ՝ Ս. Ստեփանյանի)։ Ղ. Ղուկասյանի երկու մետր 20 սմ բարձրությամբ արձանը, որը դրված է 4 մետրանոց գրանիտե պատվանդանի վրա, Սովետական Հայաստանի լավագույն հուշարձաններից մեկն է։ Հայաստանի կոմերիտմիության հիմնադիրն այստեղ ներկայացված է ամբողջ հասակով, հրացանը ուսին, մյուս ձեռքով դրոշը բռնած։ Գլուխը բարձր, կուրծքն առաջ գցած, նա համարձակ ու աներեր առաջ է գնում։ Նրա կերպարի մեջ քանդակագործը նպատակ է դրել արտահայտել, ինչպես ինքն է գրում, «մեր դարաշրջանի համար ամենից բնորոշը՝ պայքար մինչև հաղթանակը, հանուն բարձրը գաղափարի»։ Մարտական դրոշը մարմնավորում է լենինյան մեծ գաղափարները։ Ղ. Ղուկասյանի կերպարն այստեղ ընդհանրացված է ու տիպականացված։ Դա մի հավաքական նկարագիր է, որի մեջ մարմնավորվել է ազատագրության համար մարտի նետվող դինվորը։ Նրա հեղափոխական գործունեության մասին են պատմում նաև պատվանդանի երեք խորաքանդակները, որոնք միաժամանակ լրացնում են հուշարձանի հեղափոխական բովանդակությունը։

Այս շրջանի հուշարձանային քանդակագործության մեջ մուտք են գործում նաև թեմատիկ կոմպոզիցիաներ։ Շատ հետաքրքրական է «Հառաջ» արձանային միաֆիգուր կոմպոզիցիան (գործ՝ Ա. Ուրարտուի), որը պատկերում էր երիտասարդ, ուժեղ և համարձակ սովետական մի նավաստու՝ նավի ղեկը ձեռքին բռնած և կանգնած դիրքով։ Երևանի 26 կոմիսարների անվան զբոսայգում 1928 թ. դրված այդ հուշարձանը տպավորիչ էր ու արտահայտում էր սովետական պետության կայուն և վստահ քաղաքականությունը։ Խիստ արտա-

հայտիչ ու լիրիկական տրամադրություն ունի նույն քանդակագործուհու «Կժով աղջիկը» կոմպոզիցիան (բազալտ, 1939), որը դրված է Երևանում, Աբովյանի անվան պուրակի մոտ, դեպի Քանաքեռ տանող խճուղու սկզբին՝ որպես աղբյուր-հուշարձան։ Ուրարտուի ստեղծագործություններից են Հովհ. Թումանյանի կիսանդրի-հուշարձանը Դսեղ (այժմ Թումանյան) գյուղում և Մովսես Խորենացու մեծածավալ, նրա հուժկու կերպարն արտացոլող արձանը Մատենադարանում։

Հուշարձանային քանդակագործության լավագույն օրինակներից են Ստ. Շահումյանի և Լենինի մոնումենտները Երևանում (գործ՝ Ս. Մերկուրովի)։



Պետք է նկատել, որ հայ քանդակագործներից շատերն են անդրադարձել Ստ. Շահումյանի կերպարին։ Դեռևս 1928 թ., երբ Սովետական Հայաստանի կառավարությունը հայտարարեց նոր մրցանակաբաշխություն Երևանում կառուցվելիք հուշարձանի համար, ստացվել էին բազմաթիվ նախագծեր։ Դրանից հետո քանդակագործ Ս. Մերկուրովի կերտած Ստ. Շահումյանի հուշարձանը, որը դրվում է Երևանում 1931 թ., մի կերպարի մեջ մարմնավորում է Բաքվի 26 կոմիսարների գնդակահարության պատմական անցքը։ Դա մեծ, չորս մեալը բարձրությամբ և 12 մետր երկարությամբ բազմաֆիգուր կոմպոզիցիայի մի հատված է, որտեղ պատկերված է Շահումյանը՝ հպարտ կանգնած թշնամիների գնդակի առաջ։ Նա արհամարհանքով թեքել է դեմքը և ձեռքերը կրծքին ծալած՝ նայում է մի կողմ։ Պարզ վերնաշապիկը, հասարակ անդրավարտիկը և բնական կեցվածքը ցույց են տալիս նրա համեստությունը, պարզությունը։ Բայց այդ համեստության մեջ որքա՜ն ուժ, մեծ կամք ու համարձակություն է մարմնավորված։ Հաստ ու ընդգծված մկաններով բազուկները, լայն թիկունքը և ամուր, հաստատուն կեցվածքը արտահայտում են արդար գործի ու հեղափոխության նպատակի նկատմամբ ունեցած Շահումյանի հավատն ու վստահությունը, որը փոխանցվում է գիտողին և ներգործում նրա վրա։

Երևան քաղաքի գլխավոր հրապարակի՝ Սովետական Հայաստանի մայրաքաղաքի կենտրոնի հարավ-արևմտյան կողմում, երեսով դեպի հրապարակն ուղղված Վ. Ի. Լենինի հուշարձանը սովետական մոնումենտալ քանդակագործության ամենագեղեցիկ ստեղծագործություններից մեկն է։ Նա ներկայացնում է քանդակագործական հուշարձանի և տրիբունայի մի հոյակապ կոմպլեքս և որպես այդպիսին եզակի տեղ է գրավում սովետական արվեստի մեջ։

Կոփածո պատենացված պղնձից պատրաստված 7 և կես մետրանոց Լենինի արձանը, որը դրված է պլատֆորմի առանցքին կանգնեցված գրանիտե բարձր պատվանդանի վրա (ամբողջ բարձրությունը 19,5 մետր է), ներկայացնում է հեղափոխության մեծ առաջնորդին և սովետական կառավարության հիմնադրին՝ նրան բնորոշ կեցվածքով և շարժման մեջ։ Ամբողջ մարմնի շարժումը դեպի առաջ Լենինի կերպարին տալիս է մեծ արտահայտչականություն։ Ձևերի ընդհանրացումը և զսպվածությունը չեն զրկում արձանին պորտրետային բնութագրությունից։ Նրա դիմաքանդակը ճշմարտացի ու համոզիչ կերպով արտահայտում է աշխատավոր մարդկության հոնձարեղ առաջնորդի կերպարը։

Լենինի արձանը աչքի է ընկնում իր պարզությամբ։ Պարզ և զուսպ է նաև նրա կոմպոզիցիան։ Համաչափություններն այստեղ ստեղծել են ձևերի մեծ ներդաշնակություն։ Դրան նպաստում է նաև պատվանդանի ձևերի օրգանական կապը արձանի հետ, որտեղ քանդակագործական ձևերի պլաստիկականությունը հիանալիորեն ներդաշնակվել է նյութի հետ։ Քանդակագործական և ճարտարապետական այս կոմպլեքսի ամբողջ արտահայտչականությանը զգալիորեն նպաստում է նաև հուշարձանի գունային կոմպոզիցիան։ Հայաստանի Փամբակի շրջանի հղկված գրանիտի մութ-մոխրագույնը կապվում է արձանի գույնի հետ և կազմում են մի միասնական հուշարձան, որի գեղեցիկ սիլուետը դիտվում է բոլոր կողմերից մեծ հետաքրքրությամբ։ Այստեղ կարևոր նշանակություն ունեն նաև տրիբունայի ճարտարապետական ձևավորումը (ճարտ. Մ. Վարդանյան և Ն. Պարեմուզյան), նրա քանդակազարդ բրոնզե դուռը և գրանիտե պատերի պսակների նրբակերտ զարդարանքները, որոնք ազգային զարդարանդակի լավագույն օրինակներ են։

Հուշարձանային քանդակագործության զարգացմանը խոշոր չափով նպաստում է ՍՍՀՄ կառավարության 1945 թ. կայացրած նոր որոշումը Սովետական Միության հերոսների, ինչպես նաև անցյալի հեղափոխական և կուլտուրայի նշանավոր գործիչների հիշատակին նոր հուշարձաններ կառուցելու մասին։ Դրանից հետո պարբերաբար հայտարարվում են հանրապետական և համամիութենական մրցանակաբաշխություններ հուշարձանների լավագույն նախագծերի համար։ Այդ մրցույթներում առաջնություն շահած նախագծերի հիման վրա, սովետական կառավարության պատվերով և ներդրած հսկայական պետական միջոցներով, ինչպես Ռուսաստանում և մյուս հանրապետություններում, նույնպես և Սովետական Հայաստանում կառուցվում են քանդակագործական բազմաթիվ նոր հուշարձաններ։

Ետպատերազմյան ժամանակաշրջանում՝ վերջին քսան տարվա մեջ, Սովետական Հայաստանում կառուցվել են մի քանի հարյուրի հասնող քանդակագործական նոր հուշարձաններ, կոթողներ. աղբյուր-հուշարձաններ և պետական-հասարակական շենքեր ձևավորող մոնումենտալ-դեկորատիվ քանդակներ։

Նշանակալից են Լենինի հիշատակը հավերժացնող քանդակագործական մեծածավալ հուշարձանները Գորիսում (գործ՝ Ս. Ստեփանյանի), Լենինականում (գործ՝ Ս. Մերկուրովի), Կամո քաղաքում (գործ՝ Ա. Սարդսյանի), Բասարգեչարում, Էջմիածնում և մյուս քաղաքներում, որոնցով մեր ժողովուրդն իր երախտագիտությունն է հայտնում հեղափոխության մեծ առաջնորդին և սովետական պետության առաջին ղեկավարին։ Այդ մոնումենտալ հուշարձանները, ինչպես նաև առանձին գյուղերում, շրջկենտրոններում, գործարանների, հիմնարկ-ձեռնարկների բակերում դրված արձանները պատկերում են մեր ժամանակի մեծագույն մտածողին տարբեր պահերին՝ Լենինը քայլելիս, ժողովրդի մոտ կանգնած, մասսայի առաջ ճառ ասելիս, խոսելիս, ելույթի ժամանակ, իր կնոջ՝ Կրուպսկայայի հետ նստած զրուցելիս, բոլոր դեպքերում բացահայտելով Լենինի անձի մեծությունը և միաժամանակ նրա համեստությունն ու ժողովրդայնությունը։

Նոր մեկնաբանությամբ են տրվել Կ. Մարքսի, Ստ. Շահումյանի, Ալ. Մյասնիկյանի, Ս. Կիրովի, Յ. Սվերդլովի, Ս. Օրջոնիկիձեի, Ա. Միկոյանի հուշարձանները էջմիածնում, Ստեփանավանում, Կիրովականում, Լենինականում, Իլիչանում, Արտաշատում և այլ քաղաքներում, շրջկենտրոններում ու գյուղերում։

Եռապատերազմյան շրջանում լայն ծավալ ստացավ Սովետական Հայաստանի համար մղված մարտերում և քաղաքացիական կռիվների ժամանակ զոհված հայ նշանավոր մարտիկների հիշատակին հուշարձաններ կառուցելու գործը։ Հայաստանի տարբեր շրջաններում և գյուղերում դրվում են Բատիկյանի, Սարուխանյանի, Ա. Փանյանի, Գր. Գրիգորյանի, Ա. Բուդաղյանի, Տատիկյանի, Մխչյանի, ինչպես նաև Սովետական Հայաստանի առաջին ատաական և կուսակցական գործիչների՝ Ա. Մռավյանի, Ա. Խանջյանի, Գ. Աթարբեկյանի, Ալ. Մյասնիկյանի, Լուկաշինի և մյուսների հուշարձանները։ Դրանք մեծ մասամբ կիսանդրի-հուշարձաններ են, որոնց դիմաքանդակներում նմանության հետ քանդակագործները բացահայտել են նրանց մարտական, հերոսական ոգին, իսկ առանձին դեպքերում՝ հեղափոխության պաթոսը։

Հայաստանի մի շարք շրջաններում կանգնեցվում են հուշարձաններ նվիրված ավյալ շրջանի ազատագրության համար զոհված մարտիկների հիշատակին։ Բնորոշ է, օրինակ, Սիսիանի հուշարձանը (1960)։ Դա ներկայացնում է 16 մետրանոց մի կոթող, որի վրա դրված է հայ կնոջ բրոնզե արձանը (գործ՝ Գ. Ահարոնյանի)։ Կինը մարմնավորում է մայր ժողովուրդը, որը ծաղկեպսակ է դնում զոհվածների գերեզմաններին։ Վերասլաց սյան առջևում՝ գրանիտի վրա, գրվել են զոհված մարտիկների անունները, իսկ մյուս երեք կողմերում բրոնզաձույլ բարձրաքանդակները պատկերում են կարմիր բանակի մուտքը Զանգեզուր, պայքարի մի դրվագ և Սիսիանի շրջանի աշխատավորների նվաճումները վերջին 40 տարում (գործ՝ Կ. Մեծատուրյանի և Թ. Միրզոյանի)։ Դրված լինելով բարձունքի վրա՝ Սիսիանի հրապարակում, այդ հուշարձանը ազատորեն դիտվում է բոլոր կողմերից և ուժեղ տպավորություն է թողնում։

Նույն թեման այլ լուծում է գտել Գորիսի հուշարձանում։ Այստեղ՝ հին բոլշևիկների անվան զբոսայգում, քանդակագործ Ա. Հարությունյանը և ճարտարապետ Վ. Սարդսյանը ստեղծել են մի բարձրաքանդակ, որը պատկերում է մի խումբ կարմիր բանակայինների, որոնք մարտական դրոշները խոնարհել են մարտերում զոհված հերոսների շիրիմների վրա։ Հուշարձանի ճակատին

դրվում է «Հավերժ փառք Զանգեզուրում սովետական իշխանության հաստատման համար մղած պայքարում զոհված մարտիկներին»։ Այնուհետև՝ անունների շարքը։ Այս խմբարանդակի և ընդհանրապես ամբողջ կոմպոզիցիայի լուծումը հարթապատկերային է, որը, սակայն, հիշեցնում է 1920—30-ական թվականներին լայնորեն կիրառվող քանդակագործական հանրահայտ ձևերը։



Բազմաթիվ ու բազմազան են Հայրենական մեծ պատերազմում հերոսաբար զոհված հայ մարտիկների պատվին կանգնեցված հուշարձանները։ Երևանի Մանկական գրոսայգում դրված Սովետական Միության կրկնակի հերոս, օդաչու Նելսոն Ստեփանյանի հուշարձանը ներկայացնում է նրա կիսանդրին՝ դրված գրանիտե բարձր պատվանդանի վրա։ Այդ դիմաքանդակում պահպանելով նմանությունը, քանդակագործ Ա. Սարգսյանը ընդհանրացրել է կերպարը։ Դա հայրենասեր, խիզախ ու արի սովետական օդաչուի մոնումենտալ կերպար է։ Նրա խիստ, կենտրոնացված հայացքը, ձգված, պրոֆեսիոնալ կեցվածքը արտահայտում են պատկերվողի մարտական ոգին և հերոսականություն։ Աչքի է ընկնում հուշարձանի հանդիսավորությունը։ Այստեղ մոնումենտալ ձևերը պայմանավորվում են նրա ներքին բովանդակությամբ, որով և բացահայտվում է պատկերվողի բընավորության ուժը։

Հուզական ներգործության մեծ ուժ է պարունակում Սովետական Միության հերոս Հունան Ավետիսյանի բրոնզաձույլ հուշարձանը, որը 1959 թ. դրվում է Ղափանի գրոսայգում։ Այստեղ քանդակագործ Սերգեյ Բաղդասարյանը ներկայացնում է մարտական սխրագործության մի պահ՝ անվախ Հունանը հերոսաբար նետվում է թշնամու գընդացրի վրա, իր կյանքի գնով փակելով կրակի այդ օջախը։ Շարժումը այստեղ

դինամիկ է, արագընթաց։ Դա սյուժետային միաֆիգուր մի կոմպոզիցիա է, որի պլաստիկական ձևերը նպաստում են նրա արտահայտչականությանը և ուժեղացնում ներգործությունը դիտողի վրա։ Ղափանի հերոս զավակի կիսանդրի-հուշարձանը դրվել է նաև նրա անունը կրող Երևանի միջնակարգ դպրոցի շքամուտքի առաջ (գործ՝ Թ. Միրզոյանի) և № 3 սովխոզի հրապարակում, այնտեղ, ուր վերջին անգամ աշխատել է Հունանը։

Ղափանի շրջանի աշխատավորների աշխատանքային արիությունը մարմնավորվել է նաև մի բանվորի ֆիգուր ներկայացնող հուշարձանում, որը կանգնեցվել է Քաջարանում (գործ՝ Ռ. Բաղալյանի)։ Մեծածավալ բազալտե այդ մոնումենտալ արձանը լայն և ընդհանրացված ձևերով դիտողի մեջ սերմանում է այն միտքը, որ աշխատանքը մեր երկրում պատվի, արիության և փառքի գործ է։ Ուժեղ և հերոսական բանվորի արտահայտիչ ֆիգուրը ներկայացնող այդ հուշարձանը միաժամանակ հաստատում է, որ աշխատավոր մարդը սովետական երկրում արժանանում է ամենայն հարգանքի ու սիրո։ Այդ, ինչպես նաև Լենինի հուշարձանը Ղափանի հրապարակում, Ա. Միկոյանի արձանը այս քաղաքի զբոսայգում, այլ կոթողներ ու խմբաքանդակներ Ղափանի փողոցներում և պուրակներում ասում են այն մասին, որ մայրաքաղաքից հեռու գտնվող շեներին Ղափանը դարձել է քանդակագործական հուշարձանների մի կարևոր օջախ։

Վերջին 15—20 տարում Սովետական Հայաստանում կառուցվել են հայ մշակույթի ականավոր գործիչների շատ հուշարձաններ։ Մայրաքաղաքում դրվել են Խ. Աբովյանի, Մ. Նալբանդյանի, Հովհ. Թումանյանի, Կոմիտասի, Ալ. Սպենդիարյանի, Ավ. Իսահակյանի բրոնզե արձանները։

Խաչատուր Աբովյանի հուշարձանը (գործ՝ Ս. Ստեփանյանի, 1950) ներկայացնում է մեծ լուսավորչի նոր կերպար։ Պլաստիկական արտահայտչականությունը, արձանի հստակ և ամբողջական սիլուետը, հագուստի, մանավանդ Ռիկնոցի լայն ու ձգված ծալքերի ռիթմիկականությունը տալիս են այդ ստեղծագործությանը մոնումենտալություն և հանդիսավորություն։

Հովհ. Թումանյանին քանդակագործ Արա Սարգսյանը պատկերել է բազկաթոռում հանգիստ նստած դիրքով։ Բաց գիրքը ծնկներին դրած Թումանյանը անդորր նայում է առաջ։ Քանդակագործը ձգտել է վերարտադրել իր ժողովրդի լավագույն ապագայի հույսերով ապրող բանաստեղծի կերպարը։

Ավելի արտահայտիչ է կոմպոզիտոր Ալ. Սպենդիարյանի հուշարձանը (գործ՝ Ա. Սարգսյանի և Ղ. Զուբարյանի)։ Այստեղ անվանի կոմպոզիտորը պատկերված է ստեղծագործական աշխատանքի պահին։

Մոնումենտալ-հուշարձանային քանդակագործության մի ուշագրավ օջախ է ներկայացնում Մատենադարանի շքամուտքը և այդ շենքի գլխավոր ճակատը։ Այստեղ դրվել են Մեսրոպ Մաշտոցի ծավալուն բազալտե հուշարձանը նրա աշակերտի ֆիգուրի հետ (գործ՝ Ղ. Զուբարյանի), ապա պատմահայր Մովսես Խորենացու և գիտնական Անանիա Շիրակացու բազալտե մեծածավալ արձանները (գործ՝ Ե. Վարդանյանի և Գ. Բաղալյանի), միջնադարյան մեծ նկարիչ Թորոս Ռոսլինի արձանը (գործ՝ Ա. Շահինյանի) և հայ մշակույթի մի շարք գործիչների արձաններ՝ Մատենադարանի առանձին սրահներում։

Վերջին շրջանում Երևանի և հանրապետության մյուս քաղաքների ու գյուղերի միջնակարգ դպրոցների և բարձրագույն ուսումնական հիմնարկների շքամուտքերի առաջ կամ քաղաքային ծաղկավետ պուրակներում դրվել են

հայ գրողների բազմաթիվ կիսանդրի-հուշարձաններ, այդ թվում Խ. Աբովյանի, Ալ. Շիրվանզադեի, Պ. Պռոշյանի, Ղ. Աղայանի, Նար-Դոսի, Վ. Տերյանի, Հ. Հովհաննիսյանի, Շ. Կուրղինյանի, Ե. Չարենցի, Սայաթ-Նովայի, Ենկո Ապոր հուշարձանները Երևանում, Մուրացանի կիսանդրին՝ Սովագյուղում (Սևան), Ա. Բակունցի գրանիտե կիսանդրին Գորիսում, Ավ. Իսահակյանի և կոմպոզիտոր Ն. Տիգրանյանի հուշարձանները Լենինականի զրոսայգում և այլն։

Մեր հանրապետությունում հուշարձաններ են դրվել նաև ի պատիվ հարևան և եղբայրական ժողովուրդների մշակույթի նշանավոր գործիչների։ Այդպիսիք են Ալ. Պուշկինի, Մ. Գորկու, Ա. Չեխովի, բուլղար մեծ բանաստեղծ Պեյո Յավորովի կիսանդրի-հուշարձանները (գործ՝ Գ. Ահարոնյանի), որոնք դրվել են նրանց անունը կրող Երևանի միջնակարգ դպրոցների առաջ, ռուս նշանավոր բանաստեղծ և թարգմանիչ, հայ ժողովրդի մեծ բարեկամ Վ. Բրյուսովի դիմաքանդակը (գործ՝ Ա. Սարգսյանի)՝ Երևանի Վ. Բրյուսովի անվան ռուսական մանկավարժական ինստիտուտի առաջ և ուրիշներ։

Սովետահայ մոնումենտալ-հուշարձանային քանդակագործության մեջ առանձին հետաքրքրություն են ներկայացնում ժողովրդական էպոսի և ընդհանրապես գրական թեմաներով ստեղծված հուշարձանները։ Այդպիսի բովանդակություն ունեցող քանդակագործական ստեղծագործություններից մեր օրերում ամենից ավելի լայն ճանաչում է գտել «Սասունցի Դավիթ» հուշարձանը (գործ՝ Ե. Քոչարի)։ Նա մարմնավորում է ազգային անկախության և ինքնուրույնության համար հայ ժողովրդի մղած դարավոր պայքարը, միաժամանակ արտացոլելով մեր ժողովրդի անպարտելիությունն ու ուժը։ Քանդակագործը ստեղծել է հայկական էպոսի ոգուն, նրա մարդասիրական գաղափարներին համապատասխան հարուստ բովանդակությամբ գեղարվեստական մեծ ու տպավորիչ կերպար։ Սասունցի Դավիթը պատկերված է իր ամեհի ձիուն՝ Քուռկիկ Ջալալին հեծած։ Նա սուրը հանած նետվում է թշնամու վրա։

Սասունցի Դավթի դեմքի մեջ քանդակագործը մարմնավորել է բարի ու անձնվեր երիտասարդի կերպար։ Նա լցված է միայն զայրույթով իր հայրենիքը ոտնակոխ անող թշնամիների նկատմամբ։ Նա գոռոզ ու ինքնարավական չէ, ինչպես մինչև այդ պատկերված շատ զորավարներ ու միահեծան թագավորներ, որոնց հուշարձանները կանգնեցվել են աշխարհի տարբեր քաղաքներում։ Դավիթը ժողովրդի զավակն է, հայրենասեր, բարեգործ և մարդասեր։ Նա բարձրացրել է իր Թուր-կեչակին միայն համբերության սահմանն անցնելուց հետո։ Նրա թուրը ծանր է, զորեղ ու ահագնաթափ։ Նրա զայրույթին կարծես մասնակից է և նրա ձին՝ Սասնա տան իմաստուն Քուռկիկ Ջալալին։ Ահավոր թուրքի պահին նրա դեմքը վայրի արտահայտություն չունի, այլ խորապես իմաստալից է և մարդկայնացված։ Նա մասնակից է Դավթի արդար կռվին։ Դրա համար էլ այդ աժդահա ձին սանձ չունի, իսկ հեծյալն էլ՝ մտրակ, նրան քշելու համար։ Ձին ինքն է նետվում թշնամու վրա, տանելով իր հետ նաև հերոսին։

Քանդակագործի կիրառած արտահայտչական միջոցները լիովին նպաստել են նրա մտահղացման լրիվ բացահայտմանը։ Նա խուսափել է մանրամասնությունների մշակումից, դիմել է ձևերի լայն ընդհանրացման ու որոշակիորեն ընդգծել է ձիու և հերոսի ֆիգուրների առանձին մասերը, ելնելով թեմայի էպոսային բնույթից։ Եր. Քոչարն այստեղ ստեղծել է մոնումենտալ մի կոմպո-

գիցիա, որի մեջ երկու առանձին ֆիգուրները միաձուլված են իրար հետ շարժման ու նպատակի այնպիսի տրամաբանությամբ, որ դիտվում են միասին և ընկալվում ամբողջությամբ։

«Ինձ, որպես քանդակագործի, հիացրեց Սասունցի Դավթի մոնումենտալ վեհաշուք հուշարձանը, որը ոչ միայն Հայաստանի կերպարվեստի, այլև Սո-

վետական Միության կերպարվեստի նշանակալից նվաճումներից է»,—ասել է Սովետական Միության ականավոր քանդակագործ, Մոսկվայում դրված Կարլ Մարքսի հուշարձանի հեղինակ, ՍՍՀՄ գեղարվեստի ակադեմիայի թղթակից անդամ Լ. Կերբելը, ավելացնելով, որ «արձանի վեհությունը, ներքին դինամիկան, հուզականությունը ներդաշնակված են ուժի և հզորության, կամքի և

վճռականության, հերոսության ու անձնազոհության պայքարի ու հաղթանակի կամքի հետ»։

Ժողովրդական ստեղծագործության հետ է կապված նաև Երևանի հյուսիսային դարպասի հուշարձանի բովանդակությունը. մայրաքաղաք մտնող խրճուղու մոտ, 10 մետր բարձրությամբ կոթողի վրա պատկերված է Վահագնի մենամարտը եռագլուխ վիշապի հետ (քանդակագործ՝ Ա. Հարությունյան, ճարտ.՝ Ռ. Իսրայելյան)։ Մեր ժողովրդի պատկերացրած հնագույն հերոսներից մեկը՝ Վահագնը, շանթահարել է այն վիշապին, որը ուղում էր կտրել հայոց երկրի աղբյուրների ջուրը։ Հուշարձանի պատվանդանից բխող յոթ աղբյուրները խորհրդանշում են այդ բախտորոշ հաղթանակը և միաժամանակ կյանք տալիս ու հագեցնում ծարավ անցորդներին։ Այդպիսի հուշարձաններ դրվել են նաև Հայաստանի մյուս քաղաքներում և շրջաններում։ Խիստ արտահայտիչ է «Զվարթնոցի արծիվը» միաֆիգուր արծվաքանդակը՝ դրված պատմական Զվարթնոցի շքամուտքի առաջ՝ դեպի էջմիածին տանող ճանապարհի եզրին։ Փոխաբերական և խորհրդանիշ պատկերող (սիմվոլիկ) քանդակներ են դրվել նաև Ղափանում, Փարաքար գյուղի մոտ՝ ճանապարհի եզրին, Գառնիի ճանապարհին և այլուր։

Արձանային ստեղծագործություններից բացի մայրաքաղաքում և Հայաստանի մյուս քաղաքներում, շրջկենտրոններում և գյուղերում կանգնեցվել են կոթողներ՝ նվիրված հեղափոխության զինվորների, Հայրենական պատերազմի զոհերի և մշակույթի ականավոր անձանց հիշատակին։ Ընորոշ է Հայաստանում սովետական կարգեր հաստատվելու համար մղված մարտերում զոհված մարտիկների հիշատակին հուշարձան-սյունը (1940) Երևանի Մանկական զբոսայգում և Երևանի քաղաքային այգում 1963 թ. դրված կոթողը հավերժական կրակով։ Դա ներկայացնում է 3 մետր բարձրությամբ շրջան կազմող հղկված գրանիտե 4 սալեր, որոնց վրա դրված պղնձե օղակի վրա գրված է «Հավերժ փառք սովետական իշխանության համար մղված պայքարի մարտիկներին»։ Կոթողը, որի մեջտեղում դրված պղնձաձույլ թասի միջից դուրս է ժայթքում վառվող գազի կրակը, շրջապատված է վերակառուցված այգու ծաղկեպսակներով, ջրավազաններով ու շատրվաններով, որոնք նոր փայլ են տալիս նրան (գործ՝ նկարիչ Վ. Պողպոմոգյանի և ճարտ. Էդ. Սրապյանի)։

Սովետական Հայաստանի 40-ամյակի պատվին և հեղափոխության զինվորների հիշատակին կոթողներ են կառուցվել նաև Լենինականում, Ղափանում, Կիրովականում, Դիլիջանում, Սևանում և այլ քաղաքներում, ինչպես նաև բազմաթիվ գյուղերում և ճանապարհներին։ Այդ նպատակով, բացի պետական միջոցներից, աշխատավորները ևս սիրով ու կամավոր կերպով միջոցներ են տրամադրում, երբեմն նույնիսկ անվճար մասնակցելով շինարարական աշխատանքներին։ Այդպիսին է, օրինակ, Ղափանի շրջանի Կեմանց գյուղի երիտասարդների նախաձեռնությամբ և սեփական միջոցներով կառուցված կոթողը, որն անմահացնում է Հայրենական պատերազմում զոհված Կեմանցի մարտիկների անունները։ Ուշագրավ է նաև Արթիկ քաղաքի հրապարակում դրված կոթողը (գործ՝ ճարտ. Գ. Աղաբաբյանի), որը նվիրված է Հայրենական պատերազմում Արթիկի շրջանից զոհված 2370 քաջարի մարտիկների հիշատակին։ Այդ կոթողի տակ ամփոփված է Օդեսայի, Սևաստոպոլի, Կերչի և Վոլգոգրադի եղբայրական գերեզմաններից բերված հողը։ Կոթողը ներկայացնում է բազալտե մի սյուն, որի վրա վառվում է հավերժական լույսը։

Եռապատերազմյան ժամանակաշրջանում լայն տարածում գտավ նաև աղբյուր-հուշարձանների շինարարությունը։ Պետք է նկատել, որ Հայաստանում աղբյուր-հուշարձաններ կառուցելու տրադիցիան շատ հին է։ Հայկական գյուղերում և ճանապարհներին պահպանվել են շատ հին ժամանակներում՝ միջնադարյան Հայաստանում կառուցված աղբյուր-հուշարձաններ, որոնցից մի քանիսը դեռևս գործում են։ Մեր ժողովուրդը միշտ էլ շինել է աղբյուր-հուշարձաններ՝ նվիրված ռազմիկների, հերոսների, ազգային բանաստեղծների ու գիտնականների անմահ հիշատակներին։

Սովետական շրջանում վերականգնելով այդ տրադիցիան, հայ քանդակագործներն ու ճարտարապետները տվել են նրան նոր բովանդակություն և նոր ձևեր, հարստացնելով ու առաջ մղելով դարերի խորքից եկող այդ ավանդությունը։ Եռապատերազմյան շրջանում կառուցված աղբյուր-հուշարձանների մեծ մասը նվիրված է Հայաստանում սովետական իշխանության համար մղված մարտերում և Հայրենական պատերազմում զոհված հերոսների հիշատակին։ Այդպիսին է, օրինակ, Արտաշատի շրջանի Դալար գյուղի աշխատավորների միջոցներով դեպի Երևան տանող խճուղու վրա կառուցված աղբյուր-հուշարձանը, որը նվիրված է Հայաստանի քաղաքացիական կռիվների հերոսներ Ֆ. Բաղալյանի, Ն. Ազիզյանի և Թ. Մնացականյանի հիշատակին։ Աղբյուրի վրա դրված բարձրաքանդակ քարը պատկերում է երեք դեռատի աղջիկներ, որոնք իրենց գլուխները խոնարհել են մեր երջանիկ այսօրվա համար զոհված հայ ժողովրդի արժանավոր զավակների շիրիմներին։ Ճարտարպետ Ս. Կնդեղցյանը և քանդակագործներ Ս. Մեհրաբյանն ու Ի. Նասենկոն ստեղծել են մի գեղեցիկ հուշարձան, որի պլաստիկական նուրբ ձևերը գրավիչ են ու հուզական տրամադրություն են ստեղծում աղբյուրին մոտեցողի մեջ։

Ճարտարապետական-քանդակագործական մի ուշագրավ ստեղծագործություն է Հայրենական մեծ պատերազմում զոհված զանգեզուրցի մարտիկների հիշատակին նվիրված աղբյուր-հուշարձանը Գորիսում։ Ճարտարապետական երեք կամարների տակից բխող սառնորակ աղբյուրները թարմ են պահում նրբանց հիշատակը, իսկ սահմանապահի ու աղջկա արձանները ազդարարում են, որ այսօր էլ աշալուրջ պահպանվում և բարգավաճում է հայրենի երկիրը։

Հանրահայտ են Երևանի մանկական երկաթուղու զբոսայգու շքամուտքի մոտ կառուցված աղբյուր-հուշարձանները նվիրված Հայրենական մեծ պատերազմի անվանի հերոսներ Ն. Ստեփանյանի, Հ. Ավետիսյանի, Զոյա Կոսմոդեմյանսկայայի, ինչպես նաև Պավել Մորոզովի և մյուսների հիշատակին։ Դրանք երկթեք կամարով, դեկորատիվ սյուներով և զարդաքանդակներով ձևավորված տուֆաշեն առանձին աղբյուրներ են, որոնցից յուրաքանչյուրի վրա եղած արձանագրություններն ամեն անգամ հիշեցնում են նրանց կատարած հերոսությունները։ Հետաքրքրական են Կիրովականի Վանաձորում կառուցված աղբյուր-հուշարձանը՝ նվիրված Հայրենական պատերազմի հերոսների հիշատակին (գործ՝ վարպետ Մեհրապի), Արտաշատի շրջանի Մրգավան, Արևշատ, Աբովյան, Նորաշեն, Վերին Արտաշատ, Բաղրամյան, Մասիս, Լուսակերտ և այլ գյուղերի աղբյուր-հուշարձանները։ Մրգավան գյուղի ակումբի առաջ կառուցված աղբյուր-հուշարձանը, օրինակ, ներկայացնում է մի հոյակապ շատրվան և հեզաճկուն աղջիկների ֆիգուրներ, որոնք գրկել են առատության կարասը, որից տարբեր ուղղությամբ ցայտում է Գառնիի անուշահամ, սառնորակ ջուրը։

Բազմատեսակ են Հայաստանի աղբյուր-հուշարձանները։ Նրանցից մի քանիսը նվիրվել է նաև պատմական անձանց և մշակույթի նշանավոր գործիչների հիշատակին, ինչպես, օրինակ, Պուշկինի լեռնանցքի (Կիրովական—Ստեփանավան խճուղի) աղբյուր-հուշարձանը, որն ունի Գրիբոյեդովի դագաղը տանող հայ գյուղացիների հետ Պուշկինի հանդիպումը պատկերող մի բարձրաքանդակ (գործ՝ Ս. Սարգսյանի), Ե. Չարենցին նվիրված աղբյուր-հուշարձանը դեպի Գառնի տանող ճանապարհին և ուրիշները։

Այժմ կառուցվում է հուշարձան՝ նվիրված Սարդարապատի ճակատամարտին։ 40 մետր բարձրությամբ մետաղաձույլ կոթողը, որն ունենալու է թրի կերպարանք, իր շուրջը եղած աղբյուր-հուշարձաններով, քանդակներով ու բարձրաքանդակներով պատմելու է թուրքական կանոնավոր զորաբանակի դեմ մեր ժողովրդի քաջարի մտրտիկների մղած հերոսական ճակատամարտի մասին, մի ճակատամարտ, որի հաղթանակով վերջնականապես դուրս մղվեցին հայրենի երկիր ներխուժած զավթիչները։ Շատ ավելի արտահայտիչ է 1915 թ. մեծ եղեռնին նվիրված կոթող-հուշարձանը, որը կառուցվում է Երևանում, Ծիծեռնակաբերդ կոչված բարձունքի վրա՝ նորաստեղծ զբոսայգում։ Այդ հուշարձանն ունի հավերժական կրակին հակված պատերով կենտրոնական կլոր բաց դամբարան, եղեռնի թեմաներով սյուժետային բազմաֆիգուր բարձրաքանդակներ կրող գրանիտե երկայնաձիգ մի պատ և հայ ժողովրդի վերածնունդը խորհրդանշող շպիլ (ճարտարապետներ՝ Մ. Թարխանյան, Ս. Քալաշյան, քանդակագործ՝ Հ. Խաչատրյան)։ Այժմ կառուցվում և շուտով կավարտվի Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 50-ամյակին նվիրված կոթող-հուշարձանը Երևանում՝ «Հաղթանակ» զբոսայգու մոտ՝ մի բարձունքի վրա, որտեղից երևում է նորակառույց Երևանի գեղատեսիլ համայնապատկերը։ Այդ, ինչպես և վերոհիշյալ մյուս հուշարձանները, օրգանապես մտնում են քաղաքային պեյզաժի մեջ, կազմում են նրա անբաժանելի մասը և խոշոր չափով նպաստում են քաղաքի գեղարվեստական կերպարի ձևավորմանը։

Մոնումենտալ-հուշարձանային քանդակագործության զարգացումը Հայաստանում, ինչպես և ողջ Միության մեջ, չի ընթացել հարթ ճանապարհով։ Այն զարգացել է գաղափարական-գեղարվեստական տարբեր ուղղություններ, հոսանքների ու խմբավորումների միջև եղած բուռն պայքարում։

Սովետական Հայաստանում կառուցված լավագույն հուշարձանները բնորոշ են իրենց հերոսական պաթոսով, գաղափարական բովանդակության վեհությամբ, թեմատիկայի հասարակական կարևորությամբ, պարզ, հստակ և բոլորին մատչելի գեղարվեստական ձևերով։ Այդ հուշարձանները հեղափոխության, գիտության, գրականության և արվեստի արտահայտած լուսավոր գաղափարները տանում են ժողովրդական լայն մասսաների մեջ։